ՏԵՂԱԳՐԱԿԱՆ

ՃՈՐՈԽԻ ԱՒԱԶԱՆԸ

առ = առուակ: — լ = լեռ: — լշ = լեռնաշղթայ:

(Շարունակութիւն)

Ժ.

Շաւշէտ, Իմերխեւ, եւ Կլարջէտ:

Խալխալի Որջոխը (Որջնհաղ) անցնելուց յետոյ, Արդուինի սահմանում աջից Ճորոխին խառնւում է Շաւշէտի վտակը իր աջակողմեան Իմերխեւ եւ ձախակողմեան Կլարջէտ (Արդանուչ) ճղերով, որոնք գալիս են արեւելքից–արեւմուտք: Այս վտակի կենդրոնական մասը, աւելի քան 75 կիլոմետր երկարութիւն ունի ակունքից մինչեւ խառնունքը: Օլթիի Տաուսկեր (Տայոց–քար), Փանաղկերտ, Բանջրոտ գաւառամասերը բաժանում են Կլարջէտից Մակրիեսի, Սալաջուրի, Թոփեօլու, Եասամալի լեռները, հարաւից, Կրաչ–Թեփէն եւ Եալադուջամը՝ արեւելքից, Կուրդեվանի, Կայաբաշի եւ Բարդլանի լեռները՝ հիւսիսից, իսկ արեւմուտքից՝ Գեղոտ եւ Զանգա լեռները:

Արդանուչի վտակը սկսւում է Եասամալից, հարաւից–հիւսիս է հոսում, Կարա լճակից, նախ մտնում է Խեւա, Գոլաշէն (Գերաշէն), Գիւլիջա, Լոնգոտ–Խեւ, Արնաուլ, Էնի–բաբաթ (Էնգի–բաբաթ), Դիակարմունջ, Շահգիւլար, Խերտվիս, Շուբալտ, Ախարշիա, Խարաուլ, Անկլիա, Մէյդան, Զիրկիս, Խաւթ, Սխա գեղերից եւ ապա Արդանուչ բերդի տակով անցնում է, ընդունելով այս գեղերից համանուն առուները, որոնք ոռոգում են անցած սահմանները: Արդանուչի առուակը թափւում են աջից՝ Ունուսխեւի առուն, որ ոռոգում է Վարտելիա, Խիլմոգրետ գեղերը. Մածալախեթի առուն՝ Բացա, Բջիա–բերդ եւ Սագարա առուն, որ ոռոգում է Սուագարա, Գորգոթախան, Խան գեղերը եւ սրանց եայլաները: Արդանուչի առուակը թափւում են ձախից Լոռի եայլաների ջրերը, որոնք իջնում են Զեգերիայից, Ուսուտից, Տանձուտից եւ Կապտախոռի ջուրը Սալաջուր լեռներից, Սախրէյի առուն, որ բղխում է Կոկեվա լեռներից եւ այս երեք առուները միանալով՝ կազմում են Աբաւեսի առուակը, որն իջնում է Ճալայից դէպի հիւսիս, ընդունելով Կարջէտի, Կոնխայի, Սագարայի առուները, որոնք ոռոգում են Ուրթամասի, Օրդիցի, Մնեբիստի, Զամարզարգեղի, Տափծերի աւրակները, բերդերը: Առաւեսի առուի շուրջը տասի չափ ամրոցներ կան, որոնցից իւրաքանչիւր ջոկ–ջոկ անուններ ունի: Եթէ մանրամասն ամէն մի աւերակի, դղեակի, վանքի անունները գրի առնուին. մի քանի հատոր կարելի է լցնել: Այսպէս էլ Ճորոխի Աւազանի ամէն մի առուի շուրջը պատած է հին քաղաքակրթութեան բեկորներով, որոնք դատապարտուած են խստատ անհետանալու: Թէ ի՞նչ մեծ քաղաքակրթութիւն, ի՞նչ խիտ բնակչութիւն է ունեցել, վկայում են այդ բոլոր աւերակները եւ նրանց կերտուածքը:

Արդանուչի բերդի Զեհէննէմ–Դերէ (դժոխքի ձոր) ցած իջնելով՝ Արդանուչը մտնում է առուակի ձախ կողմը բարձունքի վրայ հիւսիսային կողմում, միանում է Ախզայի առուին, որ ոռոգում է՝ Ուրգուլա, Թէջէէլի, Գիւմիշ–Խանէ, Գիւսխանէ, Բոսելտ, Շագիրա, Արկի, Կաշուխտի, Արկիմ, Ագարա եւ Կշլա գեղերը, մացրանները եւ Ախզա ամրոցը: Շագիրա առուն ոռոգում է Խարխլալը (Երեւի ժամանակին Խարխալից եկուոր բնակիչներ է ունեցել): Արդանուչի բերդից, աւանի բէդէնից (պարսպից) ջոկ, այլ եւ այլ աւերակ եւ բնակ գեղերում տասից աւելի ամրոցներ կան, որոնք, բոլորն էլ դղեակների եւ ապարանքների աւերակները ներկայացնում են քննող աչքերին:

Կուրդեվան լեռներից բղխում է Զխակաթիխեւի առուակը, որ ուղղակի թափւում է ձախից Շաւշէտի վտակը, ոռոգում է Բարիւ, Կարսիա, Ուստամել, Սոլիանա, Կոնտրում, Գորոշէտ, Վ. Պետրոբան, Սամխար, Ուկին, Ն. Պետրոբան, Գոդատի, Նորգիէլ եւ Խոզաբարտ[1] առուակները, որոնք ոռոգում են համանուն գեղերը իրենց պարապանքներով: Սակալ–Դիզան լ–ից իջնում է Սամի–ծխալի առուակը եւ խառնւում է Շաւշէտի վտակին, որը ոռոգում է Գորիխոցիա, Անակերտ, Արչիեսի, Անչ–Մ., Անչ–Փ., Անչկորա, Անչկորա–Մացրա գե-

[1] Խոզաբարտայի մօտ մինչեւ օրս կանգնած են տաճարի որմեր, վանքի աւերակներ, որոնք մի ժամանակ զարդարած էին Շաւշէտի ակը: Կան բազմաթիւ ամրոցների տաճարների եւ վանքերի աւերակներ, գերեզմանոցներ, որոնք միայն անցեալի փլատակն են ցոյց տալիս:

digitised by

գերը իրենց պարագաներով։ Զիդել առուակի վրայ են — Գուդատի եւ Զիդիլ գեղերը։

Արդանուչի վերի բերդի շինուած է մի բարձր ապառաժի կատարին, որը աւանից աւելի քան 70 մետր բարձրութիւն ունի, սրակող եւ անմերձենալի է։ Վերի բերդը շուրջը պարիսպ եւ որմ ունի, չորս կողմից անմատչելի է. իր մէջ կան այսօր էլ դղեակի, զօրանոցի, տաճարի, աւազանի, նոյն իսկ պարտիզի մնացորդներ, որտեղից 1873 թ. թուզ եւ նուռ եմ քաղել։ Ինչպէս վերի բերդը աւանից բարձր է, այնպէս էլ աւանը աւելի քան 100 մետր բարձր է առուակի ընթացքից — Զէհէնէմ-Դերէից, պատած է պարսպով, անառիկ է չորս կողմից, սոսկալի դարիվերով ջաղացներից եւ էշկինարի ձորից բարձրանում են։

1587 թ. Պոլսից յատուկ Բերաթով «Պոսի փաշէնց» տոհմը, որպէս վասալ եւ վարիչ տիրել է բերդին եւ շրջակայքին։ Որովհետեւ վրէժխնդրական տեղութեամբ լարուած էին Արդվինի Բէգերի ընտանիքի դէմ, ժառանգորդը 20—25 տարուան հասակում ընդհարուել է հակառակորդների հետ եւ սպանուել։ Այդ պատճառով այրիները չարունակել են բերդին իշխել, մինչեւ որդու չափահաս դառնալը։ Այսպէս այս տոհմի երիտասարդները ոխակալուած՝ ընդհարուել են Արդվինի Բէկերի հետ եւ մեռել. այրիները կառավարել են երկիրը եւ նրանց վերջին Տիկինը 1833 թ. զոհ է գնացել Քոռ Հիւսէին Բէկին, որ իւրացրել է բերդը, ջնջել է Պոսի փաշայի տոհմը եւ ինքն էլ հաստատուել է Կարսի Ահմէդ փաշայից. փախել է Տայոց-քար, ապաստանել է Ոլորի բերդը։ Այստեղից սրան կալանաւորեց տաբաւ Էրզրում Յովհաննէս եպ. Սելիեանը, ուր կախեցին եւ վերջ տուին ինչպէս Արդանուչի, այնպէս էլ Ճորոխի Աւազանի վասալական Բէգերին։

Արդանուչի Կլարջէթ գիւղը ցոյց է տալիս նոյնպէս դաւառի անուան պահպանութիւնը 3000—4000 տարուց ի վեր։ Կլարջէթի բերդը մի ժամանակ այնպիսի հռչակ է ունեցել, որ ամբողջ դաւառին տիրել եւ իր անունն է վրան դրել։ Այս օր Կլարջէթի բերդի պարիսպները, ապարանքի եւ տաճարի աւերակները ցոյց են տալիս, նրա փառաւոր անցեալը. ուր նստել են Կլարջէթի պատէգիները։ Կլարջէթից երկու կիլոմետր հեռաւորութեան վրայ է Ուրթամասի ամրոցն ու աշտարակը, որոնք աւերակ են. աշտարեան որմերով անհամեմատ հին են։ Ուրթամասին կամ Ուր-Ֆամասի Կլարջէթի պատմութիւնը, նախկին պատէգիների գոյութիւնը հաստատում են Ակկադների Ուրի եւ Ուրեկի, Հաթթերի Ուր-գա, Միդանիայի Ուրֆա քաղաքների գոյութեան շրջանը։ Տարօրինակը սրանց աւերակների գոյութիւնը, տոկունութիւնը, պահպանութիւնը չէ, այլ ժողովրդի պահպանողականութիւնն է, որ որպէս սրբութիւն պաշտպանել է հին սրբավայրերի աւերակները իրենց անունով եւ երեւի դեռ 20—30 դար եւս ապրին։ Անիջայի բերդը նոյնպէս Ուրթամասիայի շրջանից է, որի մօտ են Ուր-Գուլա եւ Շաղորա բերդ, ամրոց, դղեակ, տաճար-ների աւերակները։ Արտանուչի շրջանի 47 գեղերից եւ այդքան էլ աւերակներից (բերդ, ամրոց, դղեակ, տաճար եւն), անչափ անտառների, լեռների, կածանների, ժայռերի, ճահիճ-լճակների անուններից հազիւ թէ 10—20 %ը փոփոխուած է, մնացեալները բոլորն էլ կրում են իրենց պատմական անունները դարեւոր կերպով։ Հետաքրքիր է Օրդից անունը (թուրքերի կարսի վրայ Օրդիզ), որ կրկնւում է Սպերում, Թորդումում եւ Օլթիում, նոյն իսկ սրանց շրջակայ Կոլայում-Կուրի ակունքում։

Ճորոխի Աւազանի անունների մէջ գործածուած «լ» պահպանած է իր բնական փափուկ լ-ի ձայնը, այն ինչ մեր դպրոցների աշակերտներին «ղ» են սովորեցրել եւ լ-ի փոխարէն ղ- են հնչում. Ուղթի, Կղարջք, Կողա. փոխանակ Ուլթի, Կլարջք, Կոլա։ Պէտք է մի անգամ ընդ միշտ վերացնել ղ-ն (փչաւոր), որ սխալների պատճառ է։ Ազգանակութիւնը չի արտասանում Ուղթի, Կղարջք. այլ ուղղակի Ուլթի (Օլթի) եւ Կլարջէթ), Կոլա։

Արդանուչի դաւառում մինչեւ սոյն պատերազմի վախճանը կային Ադանուչում (արհեստաւորներ), Տանձոտում եւ Ենիբարթում հայեր-գիւղացի հողագործներ, որոնք մնացել էին որպէս փչրանք հին ճոխութիւնից։

Շաւշէթ վտակն սկսւում է Դարացվրելի եւ Արսեան լեռներից եւ համանուն լճակից, անցնում է Դարացվրելի աւանից-Մասուրթ անունով, ուր ձախից միանում է վ. եւ Ս. Սուլիզ, Բալվանա, Շաւկետ[1],

[1] Բուն Շաւշէթը պիտի լինի այս Շաւկետը, որը աւերակ է եւ ամրոցը կործանած։

Սախմար օղլի, Տաուզեռ առուակները համանուն գեղերից, որոնք բղխում են Եալանուզ-չամ լ-ից, աջից խառնւում է Շաուշէտի վտակին Սիլորանի առուակը համանուն գեղից, որ իջնում է Շաուլ լ-նից, ոռոգում է Յեխիա, Մերիա, Պերանատ, Սախմոր եւ Կոբիդար գեղերը. Ախաշէն, Սախրա եւ Սպիր-օղլի կշլակները: Զորս կիլոմետր ցածից ընդունում է Նոյնպէս աջից Տբեռի[1] առ-ը, որ իջնում է Կվարէկարի լ-ից ոռոգելով Ցիտվէտ, Կորովատ, Դաբակիթիլ, Մուխտատ, Մորգէլ, Սաբուդարա գեղերը, ընդունելով աջից Ցիխիձիրի առուակը համանուն գեղերից՝ խառնւում է Շաուշէտին եւ Ախալդարա առ-ը ոռոգելով համանուն եւ Սինկոտ[2] գեղերը թափւում է Շաուշէտ գետը աջից: Սինկոտ առուակը Ատեան լեռներից-ոռոգում է երկրորդ Սիկոտը եւ թափւում է Նոյնպէս Շաուշէտի վտակը: Զախկոմից Շաուշէտի ջրին միանում է Օքրոբագետի առուակը, որ իջնում է Եալանուզ-չամից, ոռոգում է Կուշէնի եւ Օքրոբագետի[3] հանդաստանը. Նոյն կողմից Մամանելիս առ-ը ոռոգում է Բաբաթի, Մամանելիս, Սաքլէլ Վ. եւ Ս., Վանտա, Բիրի-

[1] Տբեռն ունի բերդ, նախապատմական աւերակներ: Այստեղ է հին Բարա գեղը, որ 1828 թ. քոռ Հիւսէինը դրուեց: Բարացիները յայտնի են Արդանուշ, Արդվին, Կարս եւ Ախբաշակ որպէս հալածուածներ խամշիլ-քոռ-Հիւսէին բէգից: Քարայի աւերակները Սենտարի Բարրան են յիշեցնում:

[2] Սինկոտում կայ մի մեծ քրիստոնէական տաճար, որ հեթանոսականի հիմունքի վերայ է շինուած: Այս տաճարը Է. դարի գործ է, հրաշալի ճարտարապետութիւն ունի: Սինկոտ անունով գեղեր շատ կան Շաուշէտ, Արդվին եւ Մուրղուլ:

[3] Օքրոբագետը հին գեղ էր մինչեւ 500 անով. երկու եկեղեցի եւ ճոխ բնակչութիւն ուներ: Այս գեղը Շաուշէտի դարձարանական եւ արհեստագիտական աւանն էր. ունէր ջուհլականոցներ, ներկարարներ, խաղախորդներ, կօշկակարներ, դերձակներ, դարբիններ, պղնձագործներ, պայտառներ, որմնադիրներ եւ հիւսներ: Սրանց ապահով եւ հասոյթաւոր վիճակը կարել էր Շամախեցի եւ Նուխեցի Ռուսն պաշտօնեաների հանդիսանը, որոնք անվերջ իրենց քարոզներով մահմեդականներին գրգռում էին քրիստոնեայ Հայերի դէմ: Ո՛չ միայն լաւ արհեստաւորներ էին, այլ մեծ էլ գիւղատնտեսութիւն ունէին. սրանց եղը, պանները, մեղրը, չոր միրգը, գինին, օղին մեծ սպառում ունէր Բաթում եւ անմիջապէս ծախւում էր: Նոյն իսկ լաւ ցանարարութիւն ունէին եւ ծխախոտի ընտիր տեսակը թանգ էին գնահատում: Սաթլէլ, Մամանելիս գեղերն էլ սրանց էին հետեւում, թէեւ այդ ծաւալը չունէին: Այս բարեկեցիկ վիճակից նախանձորդ բեգերն ու մոլլաները 1915—1918 թ. թ. բոլոր քրիստոնեաներին կոտորեցին եւ գեղերը աւերակ թողին: Օքրոբագետի Ս. Յովհաննէս տաճարի բակում դեռեւս կայնին ԺԸ-ԺԱ· դարերից մնացած, որոնց արձանագրութիւնները եւ քանդակները աւելի հին են:

կաթի, Վել, Սափոր կամ Սապար[1] Վ. եւ Ն. եւ Սամչելի գեղերը: Խանթուշէտ առուակը իջնում է Սամոսլիատ եւ ակ-լճից եւ Կրաչ-թէվիկ լ-ից բազմաթիւ առուներով, ոռոգում է Խանթուշէտ, Զարտուլէտ, Մոալակոշմիտ, Կվատետրիս, Ցիցխլաուր, Մամպալար, Զինտոբա եւ Գուրբանել գեղերը, մացրանները, ախոռները, եայլները ու աւերակները: Կորխու լեռներից իջնում է Ցորցել առուակը, որ ոռոգում է Համանուն, Սատապլիա, Կոլշատլօ, Մոխրորոզ, Զիփտլիկ, Վերխնա, Զարաթ եւ Անկլիս գեղերը, հանդերը, ախոռները, մացրանները եւ եայլանները: Մոխորինի առուակը ոռոգում է Մաստա եւ Մոխորին գեղերը իրենց պարտէզներով: Ցիպտիս Բարի գեղի այգեստաններին մօտ Իմերխեւ վտակը միանում է Շաուշէտի վտակին:

Իմերխեւ վտակն սկսւում է Կորդա եւ Շաուշէտ լ-ից, ացնում է Գոգինձէրի, Գոման, Իմերխեւ եայլաներից, իջնում է հարաւ-արեւելք մինչեւ Իպսորէուլ աւանը. ձախից ընդունելով Տբեռի եւ Բոզտայի առուները. աջից՝ Մերեռի, Կարչխալի եւ Կարեռի առուները, որոնք բղխում են համանուն լեռներից, ոռոգում են համանուն եւ ուրիշ բազմաթիւ եայլաներ ու գոմեր: Ապա գէպի հարաւ եւ արեւելահարաւ ցածդալով՝ ոռոգում է Կոկլիեռի, Կոկմեռի, Դիոբանի (եւս եայլա), Ցիտպլեռի, Սուրեվինի, Փխիկուրի, Բարայի (աւերակ), Կակիտիեռի, Դիդմարի, Դասամոքի, Ճէղլաուրի կամ Ճիդլաուրի, Գարիէլի եւ Դովլաթի գեղերի հանդերը եւ միանում է Շաուշէտի վտակին:

Իմերխեւ վտակը Իմիրխեւ գեղը հաս-

[1] Սապոր Վ. եւ Ն. երկու գիւղակներ են, ուր մահմեդականներ են ապրում եւ սովորականից տարբեր ցեղի են պատկանում: Սրանք Թուրքման Բլի-ալաշիներին, դուցէ եւ գեաբրեր (մոխրապաշտներ), չեն խնամիանում շրջակայ ժողովուրդների հետ, իրենք էլ սպառուելու վտանգ են: Սապոր-Շապուր կամ Շապհու անունը կասկածներ է ծնեցնում այցելուին եւ կարծիքներ զարթեցնում: Շաուշէտի խլամացածները Թուրքերէն են խօսում. Թէեւ սարի այն կողմը, Իմերխեւում մուսուլմաններն ընդհանրապէս վրացական գաւառաբարբառով են խօսում եւ խիստ շեզոք դիրք ունին Շաուշէտի Թուրքացածների հետ, որոնք նախկին Հայեր են: Ամբողջ Իմերխեւում մէկին չէք գտնի, որ Թուրքերէն խօսել իմանայ՝ մայրենի լեզուն երեխայի համար վրացերէն է: Իսկ Իմերխեւցի աղամարդիկ հաճելի կարողանում են Թուրքերէն իրենց միտքը արտայայտել: Շաուշէտի Թրքացածները կին թէ այր Թրքախօս են. Թէեւ լեզուի ոճի մէջ մնանում են եւ հայ բառեր են գործածում: Շաուշէտի Թրքանալը 1578 թ. Լալա-փաշայի շրջանն է:

digitised by

նելուց յետոյ, ձախ կողմից ընդունում է Շամփի-Խեւի, Ծղալոցիմերի (եւս եայլա), Ագարայի, Ամետի, Ծետպլերի, Խոխլերի, Մաչխատիշի, Մոնամբայի, Գարբպոպի, Կվիբալի, Զինալի, Միքելետի, Ուկետի, Կարկուտետի, Անչիետի, Կադակետի եւ Կվիբալի առուները մինչեւ Սուրեվինի մօտ. իսկ աջից ընդունում է՝ Խաստա, Գարկելոպի, Պարնուխ, Խեվիվրիլ, Բելտիէտի, Բոցգիրետի, Կեդիետի, Զիխտայի, Գոբոխերի, Շավմբայի, Դաբա, Դիվաձիեբի, Զիոսի, Զակիտի, Դավիետա, Զվաբերի, Ուրէ եւ Կակիեմի առուները, որոնք բոլորն էլ դուռգում են համանուն գեղերն, եայլաները, գոմերը, մացրանները, ախոռները, աւերակները եւ վանքերը:

Տեարիկվա լեռ. իջնում է եւ Իմերխեւին միանում է Զիխոր առուակը, որ ոռոգում է Անդրէաձմինդա, Տեարակեսի, Ալիոնիձէ, Զիխոր եւ Ճեղլաուրի աւերակները: Սուրեվանից մինչեւ Ցեպոխ-Բարի, Իմերխեւի վտակը ընդունում է ձախից մի քանի փոքրիկ առուներ, որոնցից մեծերն են Կոմտի, Զվարիսխեւի, Գումանաձէ, Զակվիլտա, Դախամոբի եւ Դավլաք մացրանների եւ կէլակ (ձմեռնոց)ների առուները: Շաւշէտ-Իմերխեւ վտակները միանալուց յետոյ աջ կողմից վտակին խառնում է Ցիպտա եւ Ցիպտայի-բերդի, Ուստամասի, Զիխիսխեւի առուակները. իսկ ձախ կողմից՝ Մոխոբինի առուակները, որոնք ոռոգում են համանուն գեղերը:

Տիարակէ լեռներից իջնում է Զիխխեւի առ-ը ոռոգելով Զավլիեւ, Զիգասխեւ, Կոկոբերդի, Զիխլիսխեւի, Նաալիմինդա եւ Ցինավալա գեղերն ու եայլաները:

Շաւշէտի առուակների ափերին եղած բոլոր գեղերը աւելի լաւ են մշակուած, քան թէ Իմերխեւինը: Իմերխեւի հայ-կաթոլիկ գեղացիները՝ Փխիկուր եւ Դավլաթ խօսում էին վրացերէն. Դավլաթն էլ 1828 թ. կոր-ծանեցին Խամչօղլիները. իսկ Փխիկուրը Շաւշէտի միւս քրիստ. գեղերի հետ կոտորուեցան 1918 թ. հնայելով՝ որ Իմերխեւի մուսուլմանները մինչեւ վերջին չունէ-տքնեցան նրանց ազատել. բայց լեթիհատի դահիճները իրենց վճիռը գործադրեցին:

Արդանուչ, Շաւշէտ եւ Իմերխեւ լեռները ընդհանրապէս ծածկուած են խիտ անտառներով: Կարճխալ եւ Գեւտորանի լեռներից իջնում է Պորտա առ-ը, որ ոռոգում է Լոդի-վակէ, Իմամ-Ծմինդա, Նատալակեվա, Լեկոբանի, Զանուժիրի (մեծ տաճար լեռան կատարին), Նիոլետի, Զիկունետի, Զավլիետի, Զիգասխեւի, Խոզբերուլի, Ցխումրի, Գագա-Սաքադուրա (հանքային ջրեր), Էդրինէ, Դիդվինախի, Ախալտա, Պորտա բերդը, Պորտա գեղը, Պորտա եայլան:

Սավացիա լեռ. իջնում է Բերդա առ. բղխելով Ակ-Բունդար Ակից, ոռոգում է բազմաթիւ եայլաներ եւ անցնում է հռչակաւոր Բերդա[1] բերդից, որ ունի մեծ տաճար. ընդունում է Թոլգոմ առ-ը, որ ոռոգում է Թոլգոմ գեղը. Ծղալոխորա առ-ը, որոնք ոռոգում են Կապարիա գեղը: Պորտայի եւ Բերդայի մէջ են Օպիզա[2], Օպիզնալա, Դավկատուռ, Գվերդա գեղերը եւ Դարա մացրան:

Մինչեւ վերջին պատերազմը Շաւշէտում հայ քրիստ. գեղեր էին Օքրոբավիսը, Սաթլելը Վ. եւ Ս., Մամանելիս, Բարա. իսկ Իմերխեւում՝ Փխիկուր եւ Դավլաթ. ուրիշ ո՛չ մի քրիստ. ժողովուրդ: Սաթլել, Մամանելիս, Փխիկուր եւ Դավլաթ հայ-կաթոլիկներ էին ապրում եւ դրանք շատ հին էին այդ վիճակում:

Բերդայի, Պորտայի ափերում գտնուած տաճարների արձանագրութիւնը նոյնպէս Արդանուչի, Փենեղի, Թաուսքարի տաճարների արձանագրութիւնները վրացերէն է եւ այդ արձանագրութիւններով շատերը կարծում են, թէ Ճորոխի Աւազանի Շաւշէտ, Արդանուչ, Ցրիա, Փխունջուր, Պալխար-Բահլ, Օլթի եւ նոյնն իսկ Թորգոմում ապրել են երբ եւ իցէ վրացիներ: Վրացիները ապրել են եւ ճնշիչ վրացական տարր նկատելի է Իմերխեւ, Մաճխիխել, մանաւանդ Աջարա վտակների Աւազանում. իսկ մնացեալ վտակների ափերում վրացական ազդեցութիւն չկայ: Ժ.—ԺԲ.դ դարերում Բիւզանդական եւ Պոնտական ազդեցութիւնով Քաղքեդոնիկ (Օրթոդոքս) կղերը

---

[1] Բերդայի բերդի, տաճարի եւ ձորերի մէջ վանքերի հետքեր լաւ կան, որոնք ծաղկել են Քաղկեդոնիկ վարդապետ եւ վերական իշխանութեան ընդունում: Պոնտական Պորտայի ձորում կան բազմաթիւ աւերակներ, գերեզմանոցներ, տաճարների աւերակ պատեր, որոնք վկայում են, թէ միջնադարում այդ վիճակը ծաղկած էր եւ մեծ էն, թէ միութիւն էր ապրում:

[2] Օպիզայի վանքը, տաճարը եւ ընդարձակ ջրանցքի շինութիւնները նրա ճոխութիւնն են վկայում Թ—ԺԲ դարերում: Այս կողմերում էլ կան նախապատմական ընդանի վիթխարի շէնքերի հետքեր:

A.R.A.R.@

տարածուած էին Ճորոխի ափերում եւ Բագրատունի տոհմից շատերը Ափխազիային, Մինգրելիային եւ Վրաստանին տիրող Բագրատունիների ազգակիցները եւ հէլլէնաէրները յարել էին Օրթոդոքս եկեղեցուն եւ հովանաւորում էին վիրական կղերին-եպիսկոպոսներին, որոնք չկարողանալով արհեստաւոր եւ երկրամշակ ժողովրդին՝ կնոջանի եկեղեցին իրենց կրօնին յարեցնել, տքնել էին տաճարների քարերը, վանքերի խցիկները վրացացնել՝ արձանագրութիւնները վրացերէն գրելով: Այս մասին վէճեր շատ են եղել եւ աշխատաւորութիւնը միշտ երես է թեքել Օրթոդոքս կղերից: Ահա այս շրջանում հայերէնից թարգմանում են վրացերէն շարականներ, աղօթքներ եւ ուրիշ կրօնական գրքեր վրացագէտ հայ վարդապետների ձեռքով, որոնք բոլորն էլ տքնել են Ճորոխի Աւազանի բնակչութիւնը բաժանել ընդհանուր հայութիւնից. բայց չի յաջողուել:

ԺԱ.

Արզվին եւ Խատիլա:

Որջնհազից (Որջոխից) դէպի հիւսիս Ճորոխը օձապտոյտ գալարումներով ուղղւում է դէպի արեւելեան-հիւսիս, ապա տրեւմտա-հիւսիս մինչեւ Սինկոտի եւ Իսրայի խառնուածքը, երեսուն կիլոմետրի չափ, որը կազմում է Արզվինի շրջանը: Այս շրջանում Շաւշէտ-Իմերխեւ վտակն աջից ընդունելուց յետոյ, ձախից ընդունում է Խատիլա վտակը, որը նոյնպէս 30 կիլոմետր երկարութիւն եւ ընդարձակ աւազան ունի:

Ճորոխը Կապաններից մտնում է Որջոխ ամրոցը, որ ո՛չ միայն անառիկ է, այլ անմերձենալի. իրար վրայ բարձրացած սրակող լեռները-ապառաժները որեւէ ծիր, կածան էլ չունին անցնելու: Ահեղագոչ եւ սրընթաց Ճորոխը այդտեղ խոր ձորից այնպէս է անցնում, որ ափերին չի կարող մօտենալ որեւէ նաւակ, մակոյկ կամ տոփ եւ այդ տեսարանը բաւական է այնպիսի սարսափ սփռելու, որ ո՛չ ոք չի յանդգնի խուժել այդ երկիրը:

Որջոխից երկու կիլոմետր ցած աջից Ճորոխին են թափւում երկու առու — Գուրջան, Բէյջուր. ապա Վասիխսեւ եւ Գեավիլ առուները: Գեավիլի դէմ առ դէմ ձախից խառնւում է Ճորոխին Իշխալբուր (Իշխանբլուր), իր ոռոգած ընդարձակ այգեստաններով այստեղ իրար կողք-կողքի առած են մեծամեծ այգեստաններ, հարաւից-հիւսիս Խոխմելի, Տոպրեակ, Յարուտ, Անարետ, Տամլանա, Սադրուէ, որոնք ընդհանուր անունով են Յրիա կամ Յուրիա: Յրիայի արեւմտեան բարձունքում կանգնած են Բարբարետի, Կենիա, Կուռն եւ Մերսուանի ը-ը, որոնցից իջնում է նոյնպէս Զիխիլետի առուն, որ գնում է ոռոգելով Դերէ-Մէհլէ, Արզվինի ալեւելեան այգիները եւ թափւում է քաղաքի մօտ Ճորոխը:

Ինչպէս նկատելի է, միջին դարերում Արզվինը աւելի վաճառաշահ աւանի, գործարանական կենդրոնի դեր է կատարել, քան թէ Ոստանի: Բնիկները իրենց աւանը-քաղաք են կանչում, որն ունեցել է այնպիսի դերք, որ իսկապէս արժանացել է այդ անուան: Ճորոխի ափին Կորձուլ կոչուած արուարձանը այնքան հին չէ, որքան հին են Վերի Շիկենիխովի առուի շուրջը կապուած օձապտոյտ եւ կեռման բուրջերն ու բեղնները, որոնք ցոյց են տալիս, թէ նախնական շրջանի բնակավայր է: Զունի հին տաճար, եղածն էլ քանդուել-հողին է հաւասարուել եւ նորն են շինել. բայց այլ եւ այլ բլրակներ կասկածներ են դարթեցնում. հարկաւոր է պեղել եւ եզրակացութեան հասնել: Ինչպէս ճարպիկ են Արզվինցիները իրենց պատրաստած գործուածները եօթը սարից անցնկացնելու, եօթը ձորեր մտնելով-չահով ծախելու. այնպէս էլ արագաշարժ եւ նուրբ գործելու-հիւսելու վարժ են Արզվինցի կիները — կտաւ, մանուտ, գեղի գործելու մէջ ունակ ձեռք ու մատներ ունին, լայն համբերութիւն եւ տոկուն աշխատութիւն: Մանում են բամբակ, բուրդ, քեջի (մետաքս), քաթան գանանգան տեսակ ընտիր եւ հասարակ գործուածներ: Շատ վարպետ էին նոյնպէս ծերերը, որոնց ներկած չիլան (կարմիրը) եւ կապուտը երբեք չէր գունատւեր մինչեւ քրքրուելը: 1873 թ. Արզվինի հաղարաւոր հորավներում այդքան բանուորուհի նստած՝ անվերջ գործում էին եւ չէին կարողանում բաւարարել պահանջը: Առանց արոտի, ագարակի, բաղչի ու պարտէզի Արզվինցի այրին տուն է պահել, տղայ է կրթել

եւ աղջիկ կարգել առանց մեծ նեղութեան: Արդվինցին չի բաւականացել ջուհլակութեամբ, ներկարարութեամբ եւ դաճուած քներով. նա լաւ խաղախորդ է եւ այս օր տարածուած է հարաւային Ռուսաստան, արհեստանոցներ հիմնած: Նա քաջկար է, դերձակ է, դարբին է, պղնձագործ է, օճարագործ է. միշտ խուսափել է ծանր աշխատութիւններից, երես չի թեքել նուրբ գործուածներից: Արդվինի շալ եւ մեառաբ գօտին աւելի մեծ պահանջ ունէր մեր երկրում, քան թէ Իրանի քերման եւ Շամի ծաղկուն գօտին: Արդվինում գործուած եւ դաճուած նկարներով եւ գիմանկարներով վարագոյրները թանկագին զարդեր էին:

Շաւշէտի, Արդանուշի մէջ կանգնած է Խարխանի լեռները, որոց հիւսիսային մասը Լեկտա եւ հարաւային կողմը Դոլիսխանայի լեռներ են կոչւում: Լեկտա լեռներից իջնում է Դարաեմերիկ առուն, որ ոռոգում է համանուն գեղը. Խարխան լ-ից իջնում է Դոլիսխան առուն, որ ոռոգում է Դոլիսխանա գեղը:

Ճորոխն Արդվին չհասած ընդունում է Աւջի-քիլիսա լ-ից իջած Թոլ-գոմ, Սվետի-բար, Վարզա, Վարաչկան, Մակրէդ, ձախից՝ Զիխիլեդ եւ Նաժուա առուակները, որոնք ոռոգում են համանուն գեղերը եւ մացրանները: Ապա ընդունում է Տուզլա Թեփէ, կերցին լեռներից իջած Խատիլա վտակը, որ ունի բազմաթիւ առուակներ. աջից՝ Դիդուրէ լ-ից Նակերով, Խինզարդ, Նաժվիա-նայլա, Տխեւնարդ, Կորիդեսի, Ցվատին-ցվար, Խորդամելա, Ստեփանիձ, Սալալէտ, Բարխունարտ, Բուջուխ, Օրթանելիս. ձախից՝ Կվախիդ լ-ից՝ Օֆիզ-Խաթաղ (Եղնոց), Դունա գեօլ (Կոյուն-լիճ), Դուրնա գեօլ Առա, Կարտլա, Մուխրանի, Արգանետ, Շխվեն-նալա, Ուրծումա եւ Մուսթաֆա-օղլի, որք ոռոգում են համանուն գեղերը իրենց պարագաներով: Ապա Ճորոխն առաջ գնալով ընդունում է ձախից՝ Սինկոտ առ-ը, որ ոռոգում է Սինկոտ գեղը. իսկ աջից՝ դարձեալ Սինկոտ, Վարիխանա, Բեղաուլ, Նադիր-օղլի եւ Իրսա առ-ը, որոնք ոռոգում են համանուն գեղերը իրենց պարագաներով:

Արդվինի շրջապատի բոլոր գեղերը խամացածներ են. թուրք բոլորովին չկան:

ԺԲ.

Մուրղուլի հովիտը եւ Դեւիս Վտակի Աւազանը:

Մուրղուլ վտակն սկսւում է Քիւքիւրդ լեռներից, ուղղւում է հարաւից-հիւսիս, ապա հիւսիս, հիւսիսային արեւմուտք եւ խառնւում է Ճորոխից ձախից: Մուրղուլի հովիտը շատ ընդարձակ է, շուրջ 20 վերստ երկարութիւն ունի, բազմաթիւ առուակներ աջից եւ ձախից, որոց ջրբաժան գիծն է Պարխալ լ. շ. Քիւքիւրդ, Դէմիր-Կափու, Ահար-բաշի, Բառնալիք-Թէփեսի, Փատաջուր լ-ը մինչեւ Սեւ Ծովի ափերը: Մուրղուլի եւ Խատիլայի մէջ են կերցին եւ Տրիալ լեռները: Ինչպէս Խատիլայի նոյնպէս Մուրղուլի լեռները անտառապատ են:

Մուրղուլ վտակը թափւում են Կվախչիտ, Էգրէ, Բեմարլի, Գավիաձորտ, Բուդիէք, Ծղալկա եայլաների առուները. ապա անցնում է Շուվալի, Ալաջա, Մուրադ-Բոդազ, Զամուրլի, Ինեգլի, Մազարա-Թիֆմա գեղերից, միացնելով նրանց առուները իր հետ: Հովտում՝ Մուրղուլի վտակի աջ ու ձախ ափին գտնւում են Ուրոգատիա, Կապարմեռ, Գուրբան, Զանձուլ, Ադուրչա, Բազա, Դուրչա, Գոլխիտ, Կուրիդերի, Օսման-Զխալէտ, Բաշքեոյ, Կուրիա, Կեմչիրեռ, Զիլաուր, Էրսեռնա, Բարնալիք-Թեփեսի — բարձունքն անցնում է Կերխանեքի եւ Պարեխի առուները, որոնք բոլորն էլ համանուն գեղերով եւ սրանց պարագաներով միանում են Մուրղուլին:

Սպերից մինչեւ Մուրղուլ 1—200 հին բովեր կան, որոնցից ամէն մինը 4—5000 տարի բանել են եւ նրանց միջից անբաւական մեծաղ են դուրս բերել: Ամեն մի հանքաբան որ ուսումնասիրել է Ճորոխի Աւազանի բովերը, նա յայտնել է, որ այդ բովերը հին են եւ դարերով գործածուած: 1820 թ. մինչեւ 1880 թ. վաթսուն տարի, այդ հանքերը բոլորովին չկարողացան բանացնել, շատերը մինչեւ այս օր էլ չեն գործում:

Ճորոխը Արդվինից ցած գալով՝ Խրայի սահմանը անցնելուց յետոյ, աջից ընդունում է Ախալ-դաբա առուակը համանուն գեղից, Մուղուլ վտակն անցնելուց յետոյ, աջից ընդունում է Դեւիս[1] վտակը, որ իջ-

[1] Դեւիս անունը ենթադրելի է, թէ Դեւ, Դեւք բառից ծագած լինի, Ամիսոսի կուսական անտառներով է բաւից ծագած Դեւիսի աւազանը, այնպիսի մութ ու մռայլ անտառներ ունի, որ սրանց սարսափը միայն կարող էր մարդ-

նում է Սավացիա լ–րից· նախ ուղղւում է դէպի արեւմուտք, ապա հարաւ–արեւմուտք, վերջը հիւսիս արեւմուտք մինչեւ Ճորոխի խառնունքը: Դեվիսի վտակն ընդունում է Բագինա[1], Ադխուլ, Դիվցխել, Ոտինգո, Կվինթաուր, Դեվսկել[2], Պետրուլա, Ոխուրջինա, Ցենատի, Վալոշան, Շվախիվ, Սամոխրեգս, Արավետ առուակները, որոնք ոռոգում են համանուն գեղերը եւ նրանց պարագաները: Դեւիս վտակը աջից ընդունում է Ադագուլի, Էբրիկա, Վանականի, Նագիարի առուակները, որոնք ոռոգում են համանուն գեղերը:

Լանինական: ԱՏՐՊԵՏ

(Շարունակելի:)

ԲՈՒՐԴ ԴՁԵԼԸ ԵՒ ԴՈՐԴ ԴՈՐԾԵԼԸ ՂԱՐԱԲԱՂՈՒՄ

Ղարաբաղի գիւղերում եւ թէ Շուշի քաղաքում սովորութիւն կար եւ այժմ էլ ընդհանրացած է, որ հարեւանները իրենց գործը շուտ առաջ տանելու համար, որոշ օր հաւաքում են իրենց հարեւանների աղջկերանց, հարսներին եւ միասին աշխատում են թէ տանը եւ թէ դրսում՝ դաշտում: Այդ ասում է միջի անել — այն է հաւաքական ուժով փոխադարձ միմեանց օգնել:

Միջին գլխաւորապէս լինում է բուրդ դզելուց· նշանակուած օրը ամէն մին իր սանդերքը (բուրդ դզելու պողպատէ ճաղերով գործիքը) վերցրած գնում է հարեւանի տունը, ծալապատիկ նստում են շարքով, տանտիկինը բուրդը բերում բաժանում է եւ նրանք կտոր վերցնելով, առաջ երկու ձեռով ֆծծում են՝ բաց են անում խճճուած մազերը եւ սանդերքի ճաղերից անցնելով, փափկացնում, ազրից մաքրում, շատ մանր մազերը թողնում սանդերքի վրայ, երկայներին կլոսալուսնաձեւ տալով, ծնկների տակ դնում:

Այդ կլոսալուսնաձեւ բուրդը ասում է մալանչ, իսկ ճաղերի վրայ մնացած տականքը՝ ֆոլֆ, որը գործադրում են «դոշակներ» լցնելու:

Մալանչները իրար հետ միացնելով հաստ պարանի պէս քիչ ոլորում են, կծկում ձմերուկի մեծութեամբ եւ պատատուկ շինում: Այդ պատատուկները քանդելով, նորից զգում են, աւելի մաքուր մալանչներ շինում եւ դրանցից հախարակով թել մանում:

Ճախարակը ունի հետեւեալ մասերը՝ քոփը (անիւը), որի վրայ ամրացրուած է կոռնը (թեւը), թեւի վրայ շրջվիկը, որ ձեռով պտտցնում են: Ճախարակը ունի ոտներ, ոտների վրայ հագցրած է պողպատէ իլիկը· իլիկի մասերն են կոլոր լիսեռը եւ կաշուի ականջը, որը ծառայում է իլիկը բարձրացնելու կամ ցածացնելու համար: Իլիկի ծայրին ձախ ձեռով բռնած մալանչը մօտեցնելով, իսկ աջ ձեռով շրջվիկը պտտցնելով, թելը փաթաթւում է վրան· այդպէս շարունակում են, մինչեւ որ թելը լիսեռի ամբողջ երեսը ծածկում է եւ դէպի իլիկի ծայրը գնալով կոնաձեւ է ստանում: Այդ կոնաձեւ հաւաքուած կծիկը, որին վեստ են ասում· հանում են իլիկից, եթէ թելը բարակ է ու ուզում են հաստ լինի, երկու վեստերի թելերը անցնում են ճախարակի իլիկին (ասեղին) եւ նորից մանում, վեստեր շինում: Թելը ներկելու համար նախ վեստերի ծայրերը բաց են անում ծալապատիկ նստած աջ ու ձախ ծնկների վրայ· այդ բացարածը ասում է վեզիր:

Թելը ներկելուց առաջ մաքուր կրաջուր են պատրաստում, վեզիրները մէջը թրջում, որ պրկանան եւ թէ լաւ գոյն առնեն: Ներկը պատրաստում են տեղական ծաղիկներից ու բոյսերից եւ թէ չուկայում գնած այս ու այն պատրաստի նիւթերից: Ներկը որոշ քանակութեամբ ջրի հետ խառն մեծ կաթսաների մէջ եփ են տալիս, վեզիր-

---

կանց գանգում ու սրտում զօրացնել Դեւերի-սատանաների գաղափարը: Այս վտակի ափի Դեւսկել, Դիվցխել առուակները յիշեցնում են Դեւիսի անունը:

[1] Բագինա առուակի եւ գեղի անունները յիշեցնում են Սպերի եւ Թորդումի Բագնիներին նուիրած աւանների, ամրոցների եւ տաճարների անունները: Կասկած չկայ, որ Բագինան-Բագաուրի, Բագդաթի, Բագաւանի, Բագրանի մի այլ դարձուածն է եւ ցոյց է տալիս, որ նա էլ անմիջական կրօնական կապ է ունեցել Ճորոխի Աւազանի միւս գաւառների հետ: Այս գաւառի օ՛չ միայն ագարակներն ու եայլաները նման են Ճորոխի Աւազանին միւս գաւառներին, այլ եւ աւերակներն էլ յիշեցնում են ընդհանրական կապ:

[2] Դեւսկել եւ Դիվցխել — տես նախընթաց ծանոթութիւնը: Ինչպէս Թեւիս, նոյնպէս Մաճխել եւ Աջարա անձամբ չեմ մտած եւ տեղեկութիւններս բոլորն էլ հիմնուած են Ռուսական Պաշտօնեաների ուսումնասիրութիւնների հիմունքով:

digitised by